ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե-8847

« 07 » դեկտեմբերի 2023թ.

«ՊԱՏՐՈՆ ՌՄ » ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԹԱՄԱՄՅԱՆԻՆ

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների, տոներային քարտրիջների և չիպային քարտերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ

- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթում (լիազորագրում) նշված է, որ լիազորագիրը տրվել է. «...էլեկտրոնային ստորագրությամբ մրցույթների փաստաթղթերի ստորագրման համար», այն դեպքում, երբ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ էլեկտրոնային աճուրդով գնում կատարելու ընթացակարգով:

«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ

- դիմում-հայտարարությունում (Հավելված 1) «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել Դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 1-ին չափաբաժնին, այն դեպքում, երբ «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ չափաբաժինների մասով:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11

կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **դեկտեմբերի 8-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՏԵՂԱԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/46 ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+37410/ 511-774, 511-788